ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

24 ՄԱՅԻՍԻ 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ N 18

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԹԱՐՈ ՍԻՄՈՆԻ ԱՎԵՏՅԱՆԻՆ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ <<ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ>> ԴԱՇՆԱԳԻՐԸ ԵՎ <<ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ>> /SEAP/ ՄՇԱԿՄԱՆՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և հաշվի առնելով համայնքի ղեկավարի՝ այլ միջոցների ներգրավմամբ Վայք համայնքում կայուն զարգացում ապահովելու նպատակով ծրագրերի մշակման և իրականացման առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն <<ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ>> դաշնագրին միանալու, դաշնագիրը ստորագրելու համայնքի ղեկավարի ղեկավարի առաջարկությանը:
2. Նվազեցնել CO_2(և, հնարավորության դեպքում, ջերմոցային այլ գազերի) արտանետումները համայնքի տարածքում առնվազն 30%-ով մինչև 2030թ. մասնավորապես էներգաարդյունավետության բարձրացման և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների ավելի լայնածավալ կիրառման միջոցով:
3. Բարձրացնել համայնքի դիմակայունությունը կլիմայի հանդեպ՝ հարմարվողականության միջոցով:
4. Մշակել Արտանետումների ելակետային կադաստր և իրականացնել Կլիմայի փոփոխության ռիսկերի և խոցելիության գնահատում:
5. Ներկայացնել Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանման գործողությունների ծրագիր՝ համայնքի Ավագանու վերը հիշատակված որոշման ընդունման օրից երկու տարվա ընթացքում, և ներառել կլիմայի փոփոխության մեղմման

և հարմարվողականության գաղափարները համապատասխան քաղաքականություններում, ռազմավարություններում և ծրագրերում:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԳԵՂԱՄՅԱՆ ՀԱՄԼԵՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ

ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ